ՍԱՀԱԿ ԱԿՆՑԻ.— 1829ին ուխտաւորութեամբ Երուսաղէմ կուգայ և հոն կը վախճանի. ի յիշատակ անոր Ս. Յարութեան տաճարին արծաթ եւ ոսկեզօծ սկիհ մը նուիրուած է յիշատակարանով մը (Յուց. Գ.)։

ՍԱՀԱԿ ԵՊՍ. ԱՄԱՍԻԱՑԻ.— Մբ. 1676ին եպս. կը ձեռնադրուի Ս. Յակոբի մէջ Եղիազար կթղ.էն (ՄՁ. Թ. 900)։ ՌՃԻԷ (=1678) թուին, Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Սարգիս Շնորհալիի Կաթողիկեայց թղթերու մեկնութեան համառօտութիւնը (ՄՁ. 799)։ 1680ին կը նորոգէ Տօնացոյց մը (ՄՁ. Թ. 120), ուր կը գրէ յիշատակարան մը և կը թուէ նոյն ժամանակի եկեղց. միաբանները՝ որք են. «... Նախապէս վրդ. Ուռհայեցի, Գրիգոր վրդն. և Խաչատուր վրդն. Համդեցի. և Սիմոն Պարոնտէրն Մշեցի. և Սարգիս Պարոնտէրն Թօխաթցի. որ զմեծ ճառն կազմեց և զայս գրքիս կողքն կազմեց. և Սահակ եպսն. անարժանս որ զայս գիրքս կրկին նորոգեցի. և տէր Դաւիթ ծեր Մոկացին. և տէր Յովհաննէս Բէֆքէյեցի և տէր Առաքել Էտիրնեցի. որ այժմ լուսարար է Ս. Յակոբայ. տէր Թումայ Բաղիշեցի. և տէր Յովհաննէս Թօխաթեցի. տէր Իգնատիոս Թօխաթեցի. տէր Յովհաննէս ժամարար Հալէպցի. և տէր Սարգիս խոստովանահայր Փայասցի և ժամարար։ Տէր Առաքել խոստովանահայր կանանց Համթեցի. տէր Պետրոս Հալէպցի։ Այսոքիկ են կարգաւորք միաբանք Սուրբ Յակոբայ ի մերում ժամանակի։» . . . «Եւ Ս. Յարութեան մէջ եղեալ միաբանքն են այսոքիկ. տէր Յովհաննէս Կարկառեցի ռէիզ. տէր Գասպար ճեպահոզի Մերսինեցի. տէր Աբրահամ Այնթափցի. տիրացու Մարկոս Կաֆայեցի» . . . «իսկ ի Հրեշտակապետի վանքն է ռէիզ տէր Միքիթարն. . . և Փրկչայ վանքն տէր Մինասն յԱմիդու. և տէր Անտոնն Սեբաստիոյ լուսարար. . . և ի Ծնունդն տէր Պօղոսն ռէիզ և լուսարար Բաղէշցի. եւ տէր Գրիգոր Համթեցի. եւ տէր Յովհաննէս Մոկացի. . . իսկ Ընծայէ տէր Մովսէս ռէիզ. և տէր Մինասն լուսարար Ղարահիսարու. տէր Մելքիսեդեկ Երզնկու. . .»։

Սահակ եպս. իր յիշատակարանին վերջը կ'անուանէ զինքը պարոնաց պարոն և կ'աւելցնէ. «Արդ աղաչեմ զհանդիպողքդ սբ տառիս յիշեցէք զանարժան զՍահակ եպս. զաշխատող սորա և զՍարգիս եպս. կազմող սորա, և զծնողն իմ՝ զհայրն իմ Մովսէս և զմայրն իմ զՈւստիանէն և զքոյրն իմ զՀեղինէն»։ ՌՃԼԲ